18956
01-7087

ԿԱՆՈՆԱԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ ՈԳՆՈՂ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ Խ. Ս. Հ. Մ.
ՍԵԿՑԻԱՅԻ

«ԽՍՀՄ ՄՈՊՐ»

(Հաստատված ԽՍՀՄ Ժողկոմխորհի 18-ն Հունվարի 1927 թ. նիստում Արձանագր. № 195)

I. ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. ԽՍՀՄ ՄՈՊՐ-ը հանդիսանալով Հեղափոխության Մարտիկներին Ոգնող Միջազգային Կազմակերպության Սեկցիան, իրեն նպատակ և դնում, բարոյական, քաղաքական, իրավաբանական և նյութական ոգնություն ցույց տալ կապիտալի յերկրներում մղվող հեղափոխական-դասակարգային և Արևելքում տեղի ունեցող ազգային ազատագրման շարժման գործին

1003
13794
327.3
Մ-89
Ա. ՍԵՄԱՆԻՍՅԱՆ

04 JUL 2013

18956

դրանց ընտանիքներին, մասնավորապես քաղաքական եմիգրանտներին։

2. ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի սեկցիայի աշխատանքը, վորպես աշխատավորների մասսայական կազմակերպություն, կառուցվում է խորհրդային հասարակականության հիմունքների վրա։

3. ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի սեկցիան կապիտալի տանջանքների յենթարկվածներին կոնկրետ փաստերով ոգնելով, աջակցում է իր անդամներին, հասկանալու միջազգային պրոլետարական հեղափոխության գործի համար մղվող պայքարի խնդիրները, նպատակներն ու եությունը, ամրապնդելով և զարգացնելով ԽՍՀՄ աշխատավորության, դեպի ամբողջ աշխարհի աշխատավորությունն ունեցած համերաշխության զգացմունքը։ վորը մարքսնչում է ազատվելու կապիտալի լծից։

4. Վերև ցույց տված խնդիրների իրականացման հասնելու համար, ՄՈՊՐը իրավունք ունի ստեղծելու կազմակերպություններ, մղելու ագիտացիա և պրոպագանդա ՄՈՊՐ-ի գաղափարները պարզաբանելու համար և սպիտակ տերրորի դեմ բողոքի կամպանիա տանելու, նյութական միջոցներ հավաքելու, իրավաբանական ուժերն աշխատանքի դնելու և կազմակերպելու հեղափոխական բանտարկյալների վրա առանձին կազմակերպությունների շեֆությունը։

5. ՄՈՊՐ-ի կազմակերպությունները իրենց աշխատանքները տանում են կուսակցական, արհեստակցական և հասարակական այլ կազմակերպությունների հետ կոնտակտ։

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ ՅԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6. ՄՈՊՐ-ի անդամ կարող է լի-

նել յուրաքանչյուր աշխատավոր և նրա ընտանիքի անդամները, որոնք ընտրական իրավունքից չեն զրկված, ճանաչում են պրոլետարական դիկտատուրան, յենթարկվում են կանոնադրությանը, անդամ են կազմակերպություններից մեկին և վճարում են անդամավճար։

ԾԱՆՈԹՈՒԹ. ՄՈՊՐ-ի անդամ կարող են ընդունվել 16 տարեկանից բարձր հասակ ունեցողները։

7. Անդամության հիմունքներն են՝ ա) կամավոր լինելու սկզբունքը, բ) անհատական ընդունվումն։

8. Անդամները վճարում են մուտքի և անդամակցական վճար, որի չափը և ժամանակը սահմանվում է ՄՈՊՐ-ի հանրապետական կոմիտեների կողմից, հիմնվելով ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի դիրեկտիվի վրա։

9. Անդամները պարտավոր են գործակցել, աջակցել (поддерживать) կազ-

մակերպության ձեռնարկումները, ակտիվ մասնակցել նրա աշխատանքներին, բացատրել ՄՈՊՐ-ի գաղափարները և խնդիրներն ու աջակցել նոր անդամներ ընդգրկելու։

III. ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՆ ՈՒ ՀԵՌԱՑՆԵԼԸ

10. Անդամների ընդունումը կատարում է ՄՈՊՐ-ի բջիջը։ Ընդունվելու համար բավական է անձնական դիմումը։

11. ՄՈՊՐ-ի մեկ կազմակերպության անդամները, յերբ տեղափոխվում են մյուս կազմակերպության աշխատանքի ռայոնը, վերջինս ընդունում է նրանց անդամ, հաշվելով նախորդ տրված բոլոր մուծումները։

12. Անդամների հեռացումը կատարում է բջիջը՝ ա) կանոնադրությու-

նը խախտելու համար և բ) դատարանի վարկաբեկիչ վճռի հետևանքով։

ԾԱՆՈԹՈՒԹ. Արտաքսածին իրավունք է վերապահվում բողոքելու իրեն հեռացնելու դեմ բարձր կազմած ինստանցիային։

IV. ՄՈՊՐ-Ի ՈՐԳԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

13. ՄՈՊՐ-ի ԽՍՀՄ-ի սեկցիայի կենտրոնական որդաններն են հանդիսանում՝

ա) ՄՈՊՐ-ի Համամիութենական Համագումարը.

բ) Համամիութենական կոնֆերենցիան։

գ) Կենտրոնական Կոմիտեն, նրա նախագահությունը և Քարտուղարությունը։

դ) Վերստուգիչ Հանձնաժողովը։

Ա. Համամիութենական համագումար

14. ԽՍՀՄ-ի ՄՈՊՐ-ի Համամիու-

թենական Համագումարը հրավիրվում է գեկավարող որգան և գումարվում է յերկու տարին մեկ անգամ։

Գումարման ժամկետը, ներկայացուցչության քանակը (նորման) և Համագումարի որակորդը սահմանում է Կենտրոնական Կոմիտեն և ժամանակին հրապարակվում է ԽՍՀՄ-ի ՄՈՊՐ-ի պաշտոնական հրատարակություններում։

ԾԱՆՈԹՈՒԹ.— Արտակարգ Համագումար կարող է հրավիրել՝ Կենտրոնական Կոմիտեն սեփական նախաձեռնությամբ կամ կազմակերպության $^1/_3$-ի պահանջով։

15. Համամիութենական Համագումարի քննման յենթակա յեն՝

ա) Կենտրոնական Կոմիտեյի և Վերստուգիչ Հանձնաժողովի հաշվետվությունների և զեկուցումների քննումն և հաստատումն.

ը) Կանոնադրության փոխումն և լրացումն.

գ) Կենտրոնական Կոմիտեյի, Վերաստուգիչ հանձնաժողովի ընտրությունը։

16. Համամիութենական Կոնֆերանսները կարող է հրավիրել Կենտկոմը, Համամիութենական համագումարից-համագումար ժամանակամիջոցում։

Համամիութենական Կոնֆերենցիայի կոմպետեցիան առաջադրվում է Համամիութենական համագումարի կողմից։

Բ. Կենտրոնական կոմիտե

17. Կենտրոնական Կոմիտեն ընտրվում է Համագումարում, որի կազմը որոշում է Համագումարը։

18. Կենտրոնական Կոմիտեն հանդիսանում է ԽՍՀՄ-ի ՄՈՊՐ-ի ղեկավարող որգանը Համամիութենական հա-

մագումարից մինչև հաջորդ համագումարի ժամանակամիջոցում։

ԾԱՆՈԹՈՒԹ.—ԽՍՀՄ-ի ՄՈՊՐ-ի Կենտրոնական Կոմիտեն միաժամանակ հանդիսանում է ՌՍՖՍՀ ՄՈՊՐ-ի Կենտրոնական Կոմիտեն։

19. Կենտրոնական Կոմիտեն կյանքում կիրառում է ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Համամիության համագումարի և ՄՈՊՐ-ի Գործկոմի վորոշումները, ուղղություն և տալիս տեղական կազմակերպության գործունեությանը, կարգադրում է բոլոր գործերը, կազմակերպության գույքը և միջոցները, ՄՈՊՐ-ի ներկայացուցիչն է հանդիսանում ուրիշ կազմակերպությունների հետ հարաբերության ընթացքում և հաշիվ է տալիս իր աշխատանքների ու միջոցների մասին Համամիության համագումարի և Գործադիր Կոմիտեյի առաջ։

20. Կենտրոնական Կոմիտեի Պլենումն առանձնացնում է իր անդամներից նախագահություն վոչ պակաս 9-ը մարդուց, այդ թվում նախագահին, նրա տեղակալին և քարտուղարություն վոչ պակաս 3 անձից։ Նախագահությունն ու քարտուղարությունը հանդիսանում են մշտական գործող որգաններ և տանում են Կ.Կ. բոլոր աշխատանքները մինչև վերջինիս պլենումը։

21. Կենտրոնական Կոմիտեի Պլենումը հրավիրվում է Նախագահության կողմից վոչ պակաս, քան 6 ամիսը մեկ-անգամ։

22. Կենտրոնական Կոմիտեն իրավունք ունի տալու ամեն տեսակ պարտավորություններ, հայցել և պատասխանել դատարանում ու կատարել ամեն տեսակի իրավաբանական գործ։ Եյությունը կազմած ԽՍՀՄ-ի ՄՈՊՐ-ի գործունեությանը և նրանից բղխող։

23. Կենտրոնական Կոմիտեն ոգտվում է իրավաբանական անձի բոլոր իրավունքներից, ունի իր կնիքը։

24. Կենտրոնական Կոմիտեն իր պրակտիկ աշխատանքների համար ստեղծում է բաժիններ, վորոնք աշխատում են հատուկ կարգով (положение)։ Կենտկոմի նախագահության և քարտուղարության, աշխատանքի կարգը (положение) հաստատվում է Կենտկոմի Պլենումում։

Գ. Վերատուգիչ հանձնաժողով

25. Վերատուգիչ Հանձնաժողովը ընտրվում Համամիութենական Համագումարում Համագումարի սահմանած կազմով։

26. Վերատուգիչ Հանձնաժողովը հաշվետու է Համագումարին և աշխատում է ինքնուրույն, հավաքվելով իր վորոշված ժամկետներին, բայց վոչ պակաս, քան յերեք ամիսը մեկ անգամ։

27. Վերաստուգիչ Հանձնաժողովը ստուգում է ինչպես կենտրոնական Կոմիտեին, նույնպես և նրա հսկողության տակ գտնվող հիմնարկությունների և ձեռնարկությունների գործունեությունը։ Ստուգման ակտերը կենտկոմի յեզրակացությամբ զեկուցվում է Համամիութենական Համագումարին։

28. Վերաստուգիչ Հանձնաժողովի անդամները, վորոնք մասնակցում են ԿԿ Պլենումին ոգտվում են խորհրդակցական ձայնի իրավունքով։

V. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՅԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

29. Հանրապետական և տեղական կազմակերպությունների կազմակերպչական կառուցվածքը (ստրուկտուրա) և կազմակերպումն ու գործունեությունը

նը սահմանվում է հատուկ կարգով (положение), վորը սահմանում է ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտրոնական Կոմիտեն։

VI. ՄՈՊՐԻ ԲՋԻՋՆԵՐԻ ՄԱՍԻՆ

30. ԽՍՀՄ-ի ՄՈՊՐ-ի բջիջները կազմակերպվում են ձեռնարկությունների, հիմնարկությունների, զինվորական մասերի, և գյուղերում աուլներում, կայարաններում և այլն։ Բջիջին հաշվի յե առնում մոտակա Կոմիտեն։ Բջիջը կկազմակերպվի և հաշվի կառնվի, յեթե նա ունենա վոչ պակաս, քան հինգ անդամ։

ԾԱՆՈԹՈՒԹ.—ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի յուրաքանչյուր անդամ պարտավոր է լինել ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի վորևե բջիջի մեջ։

31. Բջիջների աշխատանքի կարգը սահմանվում է համապատասխան դրությամբ (положение), վորը հաստատում

և ՄՈՊՐ-ի համապատասխան Հանրապետական Կենտրոնական Կոմիտեն։

VII. ՄՈՊՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

32. ՄՈՊՐ-ի միջոցներն են կազմում ա) անդամավճարների, մուտքի և ամսական, բ) կամավոր մուծումները և նվիրատվությունները, գ) ՄՈՊՐ-ի հրատակությունների յեկամուտից և դասախոսություններից, կինո-սյանսներից հավաքած գումարները և այլն։

33. Տեղական կազմակերպությունների հավաքած բոլոր միջոցներն ամսե-ամիս ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի Կենտկոմի համաձայնությամբ, Հանրապետական Կենտկոմները մուծում են ԽՍՀՄ-ի ՄՈՊՐ-ի գրամարկղը։

34. Յեթե միջոցները Կոմիտեներից մտնում են Հանրապետական Կենտկոմի գրամարկղը, ապա Հանրապետական Կենտկոմները բացառությամբ այն գումարների, վորոնք բաց և թողնված (ассигнованных) ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի ԿԿ սմետային կարգով տվյալ հանրապետության ԿԿ ծախքերի համար, մնացած բոլոր գումարները անհապաղ փոխադրվում են ԽՍՀՄ-ի ՄՈՊՐ-ի գանձարկղը։

VIII. ԽՍՀՄ-ի ՄՈՊՐ-ի ԼԻԿՎԻԴԱՑԻԱՆ

35. ԽՍՀՄ-ի ՄՈՊՐ-ի լիկվիդացիան կարող է կատարվել ԽՍՀՄ Ժողկոմխորհի վորոշմամբ, կամ Համամիութենական Համագումարի վորոշմամբ, յեթե կընդունվի ձայների $^2/_3$-ի մեծամասնությամբ։ Լիկվիդացիայի կարգը սահմանվում և համապատասխան վորոշումով։

Իսկականի հետ ճիշտ է՝ ԽՍՀՄ ՄՈՊՐ-ի ԿԿ Գործերի վարիչ

Ա. Եշատով

ԽՍՀՄ Ժողկոմխորհի առ 8 հունվարի 1927 թ. վորոշման հիման վրա ՄՈՊՐԻ և նրա բոլոր ձեռնարկություններն ազատվում են յեկամտային հարկից, դրոշմատուրքից և դատական ծախքից (ПОШЛИН) ինչպես և նոտարական ծախքերից։

Հրատարակություն ՀՍԽՀ ՄՈՊՐ-ի
Փամբակ-Լոռու Գավկոմի

Մարտ, տպար. № 268

2802-10

ՀՀ Ազգային գրադարան
NL0228026